«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Մայրենի (5-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն...

Մուշեղ Իշխան

1. **Ընդգծի՛ր այն բառերը, որոնց երկրորդ արմատն արտասանվում է բաղաձայն հնչյունով (2 միավոր):**
   Վրաերթ, կիսաեփ, ուղերթ, պարզորոշ, երկարատոն, բարձրորակ, արջաորս, թռչնորս:

2. **Գտի՛ր օրինաչափությունը, լրացրո՛ւ շարքերը 2-ական բառերով (2 միավոր):**

   ա) օծել,

   բ) դեղնազօծ,

3. **Ի՞նչ պիտի անես, որ դառնա՝** (2 միավոր):

   Գալ-ը վայրի կենդանի—----------

   Գիրք-ը թմբլիկ, գիրուկ—----------

   Վարք-ը պատիվ, հեղինակություն—----------

   Պապակ-ը իղձ, ցանկություն—----------

4. **Ի՞նչ ձայն է հանում՝** (3 միավոր):

Հուշում. ձայն նշանակող բառերը դի՛ր ներկա ժամանակով, օրինակ՝ *խոզը խռխռում է:*

Ոչխարը .....

Կովը.....

Կատուն.....

Ձին.....

Ագռավը.....

Ձանգը .....

5. **Գտի՛ր և վտարի՛ր ավելորդին՝ բառի վերևում հանածի նշան դնելով** (2 միավոր):

Ուրախ, զվարթ, թախծոտ, խնդուն

Հովիկ, հողմ, մրրիկ, մրիկ

Թևածել, սավառնել, սողալ, ճախրել

Դալուկ, գունատ, դժգույն, գունեղ

6. **Գուշակի՛ր** բառերը, **հետևի՛ր ցուցումներին, գումարի՛ր համապատասխան արմատները կամ ածանցները և ստացված բառը գրի՛ր հավասարման նշանից հետո** (3 միավոր):

Արու ոչխար + *ակ* վերջածանց=

Վար-ի հականիշը + **ելնել**-ի արմատը + **ոտք-**ի -ածանցը=

Տարի-ի հոմանիշը + ա + **հին**-ի հականիշը=

Ժպտուն-ի արմատը + **դեմք**-ի հոմանիշը=

Երանգ - ի հոմանիշը + ա + **սիրուն**-ի հոմանիշի արմատը=

Թույլ -ի հականիշը + ա + **կռել**-ի արմատը=

7. **Մի հեքիա՛թ հորինիր հյուր-քամելեոն երկանդամով (6 միավոր):**

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____